# ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հաստատում եմ

Տնօրեն՝ Ն Գասպարյան

## 1. Ընդհանուր դրույթներ

1.1 Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ուսանողական խորհուրդը ինքնակառավարման ընտրովի մարմին է և գործում է քոլեջի կանոնադրության համաձայն:

1.2 Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ուսանողական խորհուրդն (այսուհետև՝ ՈՒԽ) արտահայտում, հարկանացնում և պաշտպանում է ուսանողության իրավական շահերը, նպաստում քոլեջում նրանց համար բարոյահոգեբանական, հոգևոր և ստեղծագործական բարենպաստ պայմանների ստեղծմանը, կապեր է հաստատում ՀՀ-ում հործող նախնական և միջին մասնագիտական այլ հաստատությունների հետ:

1.3 Ուսանողական խորհուրդը մյուս բոլոր երիտասարդական կազմակերպությունների հետ իր հարաբերությունները կառուցում է փոխշահավետության և համագործակցության պայմանագրային հիմունքներով՝ չհակասելով ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ Օրենսդրությանը և քոլեջի կանոնադրությանը:

1.4 Ուսանողական խորհրդի կանոնադրության մեջ նախատեսվող փոփոխությունները առաջակվում են ուսանողական խորհրդի և անդամների ձայների գերակշիռ մեծամասնությամբ:

## 2. *Գործունեությունը (պարտականությունները և իրավունքները)*

2.1 ՈւԽ-ը իր գործունեությունը կազմակերպում է ժողովրդավարության, մարդու իրավունքների պաշտպանության, հրապարակայնության, փոխադարձ հարգանքի և համագործակցության վրա:

2.2 ՈՒԽ-ը իր գործունեությամբ օժանդակում է ուսումնական հաստատության ուսանողական ուսումնական, սոցիալ-կենցաղային, հոգևոր-մշակութային, մարզական աշխատանքների և հանգստի բնականոն գործընթացի ապահովումը:

2.3 Ելնելով ուսումնական հաստատության ուսանողների նախասիրություններից և կարողություններից՝ ՈւԽ-ը ստեղծում է գեղարվեստական, տեխնիկական, սպորտային խմբակներ, ակումբներ՝ նրանց ուժերով հաստատության ներսում,

- Մյուս ուսումնական հաստատությունների հետ պլանավորում և անց է կացնում տարբեր բնույթի միջոցառումներ,
- Ի պաշտոնե ուսումնական հաստատության կառավարման խորհրդի անդամ է:

4.2 Նախագահի տեղակալը՝
- Կենտրոնացնում է մնացած բոլոր աշխատանքները,
- Նախագահի բացակայության դեպքում կամ նրա հանձնարարությամբ փոխարինում է իրեն:

4.3 Քարտուղարը՝
- Արձանագրում է ՈՒԽ նիստերը,
- Վարում է խորհրդի տնտեսությունը,
- Զբաղվում է ժողովի մասնակիցների ներկայությունն ապահովելու հարցերով:

4.4 Երկու անդամները՝
- Աջակցում են ՈՒԽ նախագահին առաջարկված ծրագրերի իրականացման հարցում ՈՒԽ-ի նիստերն անց են կացվում ամիսը մեկ անգամ:

### *4. ՈՒԽ- ֆինանսական միջոցները*

1.1 ՈՒԽ-ն անվճար օգտվում է ուսումնական հաստատության տարածքային և գույքային միջոցներից:

# ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ

# 2018-2019 ՈՒՍ. ՏԱՐՎԱ

# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Հաստատում եմ

Տնօրեն՝ Ն. Գասպարյան

| *N* | *ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ* | *ԺԱՄԿԵՏՆԵՐ* |
|---|---|---|
| | *Կազմել ՈՒԽ-ի հերթական նիստերի ժամանակացույց* | *Փետրվար* |
| 1. | Ուսանողական խորհրդի կազմի համալրում | Սեպտեմբեր-հոկտեմբեր |
| 2. | Ամիսը մեկ անգամ հրավիրել կուրսերի ավագների ժողով, որտեղ կքննարկվեն ուսանողությանը վերաբերող և այլ կազմակերպչական հարցեր | Տարվա ընթացքում |
| 3. | Կազմակերպել միջոցառումներ նվիրված «ՀՀ տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված տոների և հիշատակի օրերին | Տարվա ընթացքում |
| 4. | Ամրապնդել կապերը հանրապետության ուսանողական և երիտասարդական կազմակերպությունների հետ | Տարվա ընթացքում |
| 5. | Գործատուների հետ կապերի հաստատում | Տարվա ընթացքում |
| 6. | Կազմակերպել բարեգործական այցեր դեպի մանկատներ, ծերանոցներ և այլ խոցելի ընտանիքներ | Տարվա ընթացքում |
| 7. | Կամավորական շաբաթօրյակների կազմակերպում | Տարվա ընթացքում |
| 8. | Ուսումնադաստիարակչական աշխատանքների անցկացում կուրսերում | Տարվա ընթացքում |
| 9. | Կազմակերպել միջքոլեջային և ներքոլեջային սպորտային մրցույթներ | Մարտ-հունիս |
| 10 | Քոլեջի տարբեր հարկերում հերթապահության գրաֆիկի կազմում և հերթապահության վերհսկում | Տարվա ընթացքում |
| 11. | Կազմակերպել ուսուցողական և ճանաչողական էքսկուրսիաներ | Տարվա ընթացքում |
| 12. | Նախաձեռնել և կազմակերպել քոլեջի տոնածառի համար նոր զարդարանքների ձեռքբերումը և տոնածառի զարդարումը | Դեկտեմբեր |